

# **«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔ**

**«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 13-րդ մասից հանել «` կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած հարցաշարերի հիման վրա:» բառերը:

**Հոդված 2.** Ուժը կորցրած ճանաչել օրենքի 26-րդ հոդվածի 2-39-րդ մասերը, 27-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը, 29-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 13-րդ կետերը, 31-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետը:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը վերապատրաստված և ատեստավորված ուսուցիչները կարող են դիմել որակավորման տարակարգ ստանալու համար, իսկ որակավորման տարակարգ ստացած ուսուցիչները պահպանում են իրենց որակավորման տարակարգը և որակավորման տարակարգին համապատասխան հավելավճարը՝ որակավորման տարակարգ ստանալու օրվանից 5 տարի ժամկետով: